

Yfyrthg-

rhwylle

$\frac{825}{71 - 50}$

1938

37



Ո. ԿԻՊԼԻՆԳ


ՓՈՒԿԸ

32Մ
4-50



ԿՐՏԱԿԱՐԱՐ ՀԱՍՏԱԿԻ ՀԱՄԱՐ

9976212
82Մ.
4-50



Ռ. ԿԻՊԼԻՆԳ


ՓՂԻԿԸ

Թուս. թարգմ. Հ. Տ. Ա.Վ.Ա.Գ.ՅԱՆ

Խաղաղեց Դ. ԽԵԿԵՆԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ ՀՐԱՄԱՆ ՀՐԱՄԱՆ ՀՐԱՄԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933




Իմ սիրուն բալիկ, ալդ հիմա միայն Փիղը կնճիթ ունի: Իսկ առաջ, վաղուց, շատ վաղուց, Փիղը վոչ մի կնճիթ չուներ: Կար միայն քիթ, բլիթի նման սև մի բան, իր ունեթությամբ մի կոշիկի չափ: Ալդ քիթը թեքվում եր ամեն կողմի վրա, բայց և ախաղես վոչինչի պետք չեր գալիս: Միթե կարելի յե ալդակիսի քթով վորեն բան բարձրացնել գետնից:

Բայց ահա հենց ալդ նույն ժամանակ, վաղուց, շատ վաղուց, ապրում եր մի ալդակիսի Փիղ, կամ, ավելի լավ ե ասել Փղիկ, վորը շատ հետաքրքիր եր, և ում վոր տեսներ, բոլորի զահլան պիտի տաներ իր հարց ու փորձով: Ապրում եր նա Աֆրիկայում ու ամբողջ Աֆրիկայի գլուխը տալել եր իր հարց ու փորձով:

Նա դիմում եր Զալլամին, իր լերկարահասակ մորքուրին, ու հարցնում նրան, թե ինչո՞ւ նրա պոչի փետուրները բուսնում են ալապես և վոչ ուրիշ կերպ, և լերկարահասակ մորքուր Զալլամը դնքսում եր նրան դրա համար իր ամուր, շատ ամուր վոտքով:

Նա դիմում եր իր լերկարոտն քեռուն, Ընձուղտին ու հարցնում նրան, թե ինչո՞ւ նրա մորթու վրա բծեր կան, ու լերկարոտն քեռի Ընձուղտը դնքսում եր նրան դրա համար իր ամուր, շատ ամուր սմբակով:

Բայց դա ել չեր փախցնում նրա հետաքրքրությունը: Եեվ նա հարցնում եր իր հաստ հորքուր Գետաձիոց, ինչո՞ւ նրա աչքերն ալդակես կարմիր են, և հաստ



Դմբում ելին նրան յերկար, առանց ընդմիջումի:

հողքուր Գետաձին դնքսում եր նրան դրա համար իր հաստ, շատ հաստ սմբակով:

Բայց դա լել չեր փախցնում նրա հետաքրքրությունը: Նա հարցնում եր իր մազոտ հորեղբայր Պավիանից (մի տեսակ կապիկ), ինչու բոլոր սեխերն այդպես քաղցր են, և մազոտ հորեղբայր Պավիանը դնքսում եր նրան դրա համար իր բրդոտ, մազոտ թաթով:

Բայց դա լել չեր փախցնում նրա հետաքրքրությունը: Ինչ ել վոր նա տեսներ, ինչ ել վոր լսեր, ինչ ել վոր հոտոտեր, ինչի ել վոր գիպչեր — նա խկույն և եթ դնքսոց եր ստանում իր բոլոր մորքուրներից ու հորքուրներից, քեռիներից ու հորեղբայրներից:

Բայց դա լել չեր փախցնում նրա հետաքրքրությունը: Յեկ պատահեց ախպես, վոր մի գեղեցիկ առավոտ, յերբ մոտենում եր որահավասարումը, այդ նույն Փղիկը — զահլատարն ու ձութ ու ծամոնը — հարցրեց մի այնպիսի բանի մասին, վոր գեռևս վոչ վոք լերեք չեր հարցըել: Նա հարցըեց՝

— Ի՞նչ ե ուտում ճաշին կոկորդիլոսը:

Բոլորը բղավեցին նրա վրա՝

— Սու-ս-ս...

Յեկ խկույն և յեթ, առանց լերկար խոսելու, սկըսեցին դնքսել նրան:

Ծեծում ելին լերկար, առանց շունչ քաշելու, բայց յերբ դադարեցին ծեծել, նա խկույն և յեթ մոտ վազեց մասրենուն ու ասաց կոլոկոլո թունիկին՝

— Իմ հալը քոթակում եր ինձ, իմ մալը քոթակում եր ինձ, և բոլոր իմ հորեղբայրները քոթակում ելին ինձ իմ անտանելի հետաքրքրության համար, բայց և այնպես յես ասատիկ կուզելի իմանալ՝ ի՞նչ կարող ե ուտել ճաշին կոկորդիլոսը:

Յեկ ասաց կոլոկոլո թունիկը, տխուր ու դառը հեկեկալով:

— Գնա դեպի լայնարձակ կմպոպո գետը: Նա կեղ-

տու ե, պղտոր-կանաչ ե, և նրա լեզրերին բուսնում են թունավոր ծառեր, վորոնք ջերմախտ են առաջացնում: Այնտեղ դու կիմանաս ամեն ինչ:

Մյուս որը, լերբ որահավասարումից վոչինչ չեր մացել, Փղիկը հավաքեց բանան — ամբողջ հարյուր ֆունտ, և շաքարի լեղեգն — նույնպես հարյուր ֆունտ, և տասնկոթ կանաչ ճոճուան սեխ, շալակեց այդ բոլորը և, ցանկանալով իր սիրելի աղդականներին բախտավոր կլանք, ճանապարհ ընկավ:

— Մնաք բարի, — ասաց նա նրանց: — Յես գնում եմ դեպի կեղտոտ, պղտոր-կանաչ կիմպոպո գետը: Ենտեղ բուսնում են ծառեր, վորոնք ջերմախտ են առաջացնում, և յես վոնց ել լինի պիտի իմանամ, ի՞նչ ե ուտում ճաշին կոկորդիլոսը:

Յեկ աղդականները նորից մի անգամ ոգտվեցին հանգամանքից ու, ինչպես հարկն եր, դնքսեցին նրան ճանապարհ դնելիս, չնայած նա չափազանց սիրավը խընդրում եր նրանց չանհանգստանալ:

Ասենք դա առաջին անգամը չեր, և նա նրանցից հեռանալիս մի թեթև գզված եր, բայց վոչ այնքան զարմացած: Ուտում եր ճանապարհին սեխ, իսկ կլեպները դցում գետին, վորովհետև այդ կլեպները հավաքելու հարմարություն չուներ նա:

Գրեմ քաղաքից նա գնաց Քիմբերլիի, Քիմբերլիից Խամի լերկիրը, Խամի լերկիրից դեպի արևելք ու դեպի հլուսիս և վողջ ճանապարհին սեխ եր ուտում, մինչեւ վոր, վերջապես, հասագ կեղտոտ, պղտոր-կանաչագույն լայնարձակ կիմպոպո գետին, վորը շրջապատված եր հենց այնպիսի ծառերով, ինչպես վոր ասում եր կոլոկոլո թունիկը:

Իսկ պետք ե դու խմանաս, իմ սիրուն տղաս, վոր մինչեւ հենց այդ նույն շաբաթը, նույն որը, նույն ժամը, նույն ըռպես մեր հետաքրքիր Փղիկը լեզրեք չեր տեսել կոկորդիլոսին և նույն իսկ չգիտեր, թե դա ի՞նչ ե: Դեռ դու պղտոկերացրու քեզ նրա հետաքրքրությունը:

Առաջինը, վոր նրա աչքին ընկալ, դա Յերկերանդ
Պիտոնն եր, Ժայռերի Ոճը, վոր փաթաթվել եր ապառաժին:
— Ներեցէք, խնդրեմ, — ասաց Փղիկը չափազանց
քաղաքավարի:

— Զեք հանդիպել վորեւ տեղ ես մոտերքում Կոկոր-
դիլոսին: Եստեղ ենքան հեշտ ե մոլորվել:

— Զեմ հանդիպել արդուք Կոկորդիլոսին, — սրտնե-
ղած կրկնեց հարցը Ոճը: — Բան ես գտել հարցնելու:

— Ներեցէք, խնդրեմ, — շարունակեց Փղիկը: — Զեք
կարող արդուք դուք ինձ հաղորդել, թե ինչ ե ուտում
Կոկորդիլոսը ճաշին:

Ալդեղ Յերկերանդ Պիտոնն այլևս չկարողացավ
պահել իրեն, արագ բացվեց ու հսկայական պոչով մի հատ
դնքսեց Փղիկին: Խոկ նրա պոչը նման եր կալսաշղթա-
մի ու ամբողջովին ծածկված եր թեփով:

— Այ, քեզ հրաշք, — ասաց Փղիկը: — Հերիք չեր, վոր
իմ հայրը քոթակում եր ինձ, և իմ մայրը քոթակում
եր ինձ և իմ քեռին քոթակում եր ինձ, և իմ մորքուրը
քոթակում եր ինձ, և իմ հորեղբայր Պավիանը քոթակում
եր ինձ, և իմ հորաքուրը Գետաձին քոթակում եր ինձ,
և բոլորը, ով հասնում եր, քոթակում ելին ինձ իմ սար-
սափելի հետաքրքրության համար, — ալդեղ ել, ինչպես
յես տեսնում եմ, սկսվում ե նույն պատմությունը:

Յեվ նա շատ քաղաքավարի հրաժեշտ տվեց Յեր-
կերանդ Պիտոնին, ոգնեց նրան նորից փաթաթվելու
ժայռի շուրջը և շարունակեց իր ճանապարհը: Չնայած
նրան բավական գգեցին, բայց նա այնքան ել չեր զար-
մանում դրանից, ալ նորից կպավ իր սեխերին և նորից
գցում եր կլեպները գետին, — վորովհետեւ, կրկնում եմ,
ինչնիվ պիտի նա վերցներ գետնից դրանք: — Յեվ շուտով
հանդիպեց ինչ վոր մի գերանի, վոր վայր եր ընկել կեղ-
տուտ, պղտորդանաչ լիմպոպո գետի ուղիղ ափի մոտ,
այն գետի, վորը շրջապատված եր ջերմախտ առաջացնող
ծառերով:

Բայց իրականում, իմ սիրուն տղաս, դա խկի լել
գերան չեր — դա Կոկորդիլոսն եր: Յեվ աչքով արեց
Կոկորդիլոսը — ալ, ալապես:

— Ներեցէք, խնդրեմ, — դիմեց նրան Փղիկը չափա-
զանց քաղաքավարի: — Պատահել ե ձեզ արդյոք լերեկի-
ցե ես մոտերքում Կոկորդիլոսը:

Կոկորդիլոսը մի անգամ ել աչքով արեց ու կիսով
չափ դուրս հանեց իր պոչը ջրից:

Փղիկը (Ելի շատ քաղաքավարի) մի փոքր լետ քաշ-
վեց, վորովհետև նոր դնքսոցները բոլորովին չելին գը-
րավում նրան:

— Ապա մի մոտեցիր, իմ ծիտիկս, — ասաց Կոկորդի-
լոսը: — Մի տեսնենք դա քո ինչին ե պետք:

— Ներեցէք, խնդրեմ, — ասաց Փղիկը չափազանց
քաղաքավարի: — Իմ հայրը քոթակում եր ինձ, և իմ մայ-
րը քոթակում եր ինձ, իմ յերկարահասակ մորքուր Զայ-
լամը քոթակում եր ինձ, և իմ յերկարուն քեռի Ըն-
ձուղուր քոթակում եր ինձ, իմ հորքուրը, հաստ Գետաձին,
քոթակում եր ինձ, և իմ հորեղբայրը, բրդոտ Պավիանը,
քոթակում եր ինձ, և Յերկերանդ Պիտոնը, Ժայռերի
Ոճը, այ հենց նոր, մի քիչ առաջ քոթակում եր ինձ սար-
սափելի պինդ, և հիմա չնեղանաք դուք իմ եղ խոսքից
— լես չելի ուղենա, վոր ինձ նորից քոթակելին:

— Մոտ արի, իմ ծիտիկս, — ասաց Կոկորդիլոսը,
վորովհետև յես ինքս եմ Կոկորդիլոսը:

Յեվ ալդ խոսքը հաստատելու համար նա իր աջ աչ-
քից բաց թողեց Կոկորդիլոսի մի մեծ արցունք:

Փղիկը սաստիկ ուրախացավ: Նրա շունչը բռնվեց,
նա ընկավ չոքերի վրա ու բացականչեց՝

— Հենց գնաւք եք ինձ հարկավոր: Քանի որ ե, վոր
յես ձեզ վինտուում եմ: Ասացէք ինձ, խնդրեմ, շուտ՝ ինչ
եք ուտում դուք ճաշին:

— Ապա մոտ արի, մանկիկս, յես քո ականջին ասեմ:
Փղիկն իսկույն մոտեցրեց իր ականջը Կոկորդիլոսի

ատամնավոր, ժանիքավոր յերախին և Կոկորդիլոսը բռնեց
նրա փոքրիկ քթից, վորը մինչ այդ նույն շաբաթը,
մինչ այդ նույն որը, մինչ այդ նույն ժամը, մինչ այդ
նույն ըոսեն իսկի լել մեծ չեղ կոշիկից:

— Այս որվանից, — ասաց Կոկորդիլոսը ատամների
արանքից, — այս որվանից յես կակսեմ ուտել յերիտասարդ
Փղիկներին:

Փղիկին դա սարսափելի դուր չեկալ և նա արտա-
սանեց քթի մեջ,

— Թողեղ ինդ, շադ ե ցաղում: (Թողեք ինձ, շատ
ե ցափում):

Ալգտեղ Յերկերանդ Պիտոնը, Ժայռերի Ոձը, Վայր
նետվեց Ժայռից ու ասաց:


— Յեթե դու, ո, իմ պատանի բարեկամ, իսկուն
և յեթ չընկնես դեպի յետ վորքան վոր դու ուժ ունես,
ապա իմ կարծիքն այն ե, վոր դեռ չասած՝ «մեկ, յերկու,
յերեք», դու, այդ կաշվե տոպրակի հետ զրուցելու հե-
տևանքով (արդպէս եր նա անվանում Կոկորդիլոսին) կընկ-
նես այնտեղ, այն թափանցիկ հոսանքի մեջ...

Յերկերանդ Պիտոնները, Ժայռերի Ոձերը, միշտ գիտ-
նականի պես են խոսում:

Փղիկը լսեց նրան, նստեց յետեկի վոտքերի վրա և
սկսեց քաշվել դեպի յետ: Նա ձգվում եր, և ձգվում, և
ձգվում, և նրա քիթն սկսեց յերկարել Իսկ Կոկորդիլոսը
յետ եր քաշվում դեպի ջուրը, փրփրացրեց ու պղտորեց
այն ամբողջովին իր պոչի հարգածներով, և նույնպես
քաշում եր, ու քաշում, ու քաշում:

Յեկ Փղիկի քիթը յերկարում եր, և Փղիկը չոել եր
իր չորս վոտքը, իր փոքրիկ փղալին տոտիկները, ու
ձգվում եր, ու ձգվում, ու ձգվում, և նրա քիթն անընդ-
հատ յերկարում եր: Յեկ Կոկորդիլոսը խփում եր պոչով,
վոնց վոր թիով, ու քաշում եր, ու քաշում, և վորքան
շատ եր նա քաշում, ավելի շատ եր յերկարում Փղիկի
քիթը, և քիթը շատատ սասակի ցափում եր:

Յեկ հանկարծ Փղիկն զգաց, վոր նրա տոտիկները
սալթաքեցին գետնի վրալով, և նա բացականչեց քթի



Յեկ Վոդիկի ժիբը յերկարում եր:



մեջ, վորի լերկարութլունն արդեն գրեթե հինգ վոտնա-
չափի լեր հասնում:

— Թողեղ: Բաբադաղ ե: Թողեղ:

Լսելով այդ Յերկերանդ Պիտոնը, Ժայռերի Ոձը,
ցած նետվեց Ժայռից, փաթաթվեց լերկտակ հանգուցով
Փղիկի լետեի վոտքի շուրջը ու ասաց իր հանդիսավոր
ձայնով՝

— Ո, անփորձ և թեթևամիտ ճամփորդ: Մենք պիտի
զոռ տանք վորքան հնարավոր ե, վորովիետև իմ կարծիքն
այն ե, վոր այդ զրահապատ տախտակամածով կենդանի
զրահակիրը (այդպես եր անվանում նա Կոկորդիլոսին)
ուզում ե փչացնել քո ապագա կարիերան...

Յերկերանդ Պիտոնները, Ժայռերի Ոձերը, միշտ
այդպես են արտահայտվում:

Յեկ ահա քաշում ե Ոձը, քաշում ե Փղիկը, բայց քաշում
ե նաև Կոկորդիլոսը: Քաշում ե, քաշում, բայց վորովիետև
Փղիկն ու Յերկերանդ Պիտոնը, Ժայռերի Ոձը, քաշում
են ավելի ուժեղ, ապա և Կոկորդիլոսը վերջ ի վերջո
պիտի բաց թողնի Փղիկի քիթը, — Փղիկը թուչում ե լիտ
այնպիսի ճղփունով, վոր լսվում ե վողջ Լիմպոպուի լեր-
կարութլամբ:

Փղիկն ինչպես կանգնած եր, այնպես ել նստեց ամ-
բողջ թափով և շատ պինդ դիպավ գետնին, բայց և ժա-
մանակ ունեցավ ասելու Յերկերանդ Պիտոնին, Ժայռերի
Ոձին, Շնորհակալ եմ», չնայած, իսկապես, իսկի դրա
ժամանակն ել չեր՝ պետք եր շտապ զբաղվել լերկարած
քթով — փաթաթել այն բանանի թաց տերեֆերով ու
թաղել Լիմպոպո գետի սառը, պղտոր-կանաչ ջուրը, վոր-
պեսզի նա գոնե մի քիչ հովանար:

— Ինչի՞դ ե պետք դա, — ասաց Յերկերանդ Պիտոնը,
Ժայռերի Ոձը:

— Ներեցէք, ինդրեմ, — ասաց Փղիկը. — Իմ քիթը
կորցրել ե իր առաջվա տեսքը, և լես սպասում եմ, վոր
նա նորից կարճանա:

— Յերկան պիտի սպասես, — ասաց Յերկերանդ Պի-
տոնը, Ժայռերի Ոձը: — Այսինքն զարմանալի յե, վորքան
դժվար են, լերբեմն, մարդիկ հասկանում իրենց սեփա-
կան ոգուալը:

Փղիկը մնաց ջրի վրա կանգնած լերեք որ ու լերեք
գիշեր և անընդհատ սպասում եր, չի փոքրանա արդյոք
իր քիթը: Բայց քիթը չեր փոքրանում, և — դեռ դա հե-
րեք չեր — այդ քիթի պատճառով Փղիկի աչքերը մի փո-
քը շիլ դառան:

Վորովիետև, իմ սիրուն տղաս, դու, հույս ունեմ,
արդեն գլուխ ընկար, վոր Կոկորդիլոսը Փղիկի քիթը լեր-
կարացրել, դարձրել եր իսկական կնճիթ — իսկ և իսկ
այնպես, ինչպես լինում են հիմիկվա Փղերի կնճիթները:

Յերրորդ որվա վերջին մնա թռավ ինչ վոր մի ճանձ
ու կծեց Փղիկի ուսը, և նա, առանց նկատելու, թե ինչ և
անում, բարձրացրեց կնճիթը, խփեց կնճիթով ճանճին —
և սա ընկավ ներքե անկենդան:

— Ահա քեզ և առաջին ոգուալը, — ասաց Յերկե-
րանդ Պիտոնը, Ժայռերի Ոձը: — Դե, ինքդ դատիր՝ կա-
րող ելիր արդյոք դումի ալգախի բան անել քո առաջվա
գնդասեղային քթով: Հա, իսկ չելի՞ր ուզենա արդյոք մի
բան ուտել:

Յեկ Փղիկը, ինքն ել չիմանալով, թե ինչպես պա-
տահեց, կնճիթը լերկարացրեց մինչև գետին, պոկեց խո-
տի մի լավ փունջ, թափ տվեց նրա վրալից ցեխն ու
իսկույն և յեթ կոխեց իր բերանը:

— Ահա քեզ և լերկորդ ոգուալը, — ասաց Յերկե-
րանդ Պիտոնը, Ժայռերի Ոձը: — Փորձելիր ապա այդ նույն
բանն անել քո առաջվա քթով: Հա, իսկ դու նկատել ես
արդյոք, վոր արեն սկսել ե սաստիկ ալբեր:

— Իսկապես վոր եղակես ե, — ասաց Փղիկը:

Յեկ ինքն ել չնկատելով, թե ինչպես լեղավ դա,
լերցրեց իր կնճիթով կեղտոտ, պղտոր-կանաչ լիմպոպո
գետից մի քիչ տիղմ ու շրմփացրեց այն իր գլխին՝ տիղմը

տափակեց թաց բլիթի պես ու Փղիկի ականջների յետեւ-
վից ամբողջ ջրի առվակներ հոսեցին:

— Ահա քեզ յերրորդ ոգուտը, — ասաց Յերկերանդ
Պիտոնը, Ժայռերի Ոձը: — Փորձելիր դու ապա նույն բա-
նը անել քո առաջվա գնդասեղալին քթով: Յեվ ապա,
ինչ ես մտածում դու դնքսոցների մասին:

— Ներեցեք, խնդրեմ, — ասաց Փղիկը, — բայց յես,
ճիշտն ասեմ, չեմ սիրում դնքսոցներ:

— Իսկ մի ուրիշին դնքսէլ, — ասաց Յերկերանդ
Պիտոնը, Ժայռերի Ոձը:

— Այ, դրան յես պատրաստ եմ, — ասաց Փղիկը:

— Դու դեռ չես ճանաչում քո քիթը, — ասաց Յեր-
կերանդ Պիտոնը, Ժայռերի Ոձը: — Դա ուղղակի մի գանձ
ե, քիթ չի:

— Ենորհակալ եմ ձեզնից, — ասաց Փղիկը, — յես դա
ընդունում եմ ի գիտություն: — Իսկ հիմա ժամանակն ե
տուն գնալու: Յես կդնամ իմ սիրելի ազգականների մոտ
և կստուգեմ իմ քիթը իմ տնեցիների վրա:

Յեվ գնաց Փղիկը Աֆրիկալով, զվարճանալով ու
թափահարելով կնճիթը: Սիրաը պտուղ ուզեց — նա պո-
կում եր այն ուղղակի ծառի վրայից, այլ վոչ թե կանգ-
նում ու սպասում ե, առաջվա պես, վորպեսզի նա ընկ-
նի գետին:

Ուզում եր խոտ ուտել — նա պոկում ե այն ուղղա-
կի գետնից, այլ վոչ ընկնում ծնկերի վրա, առաջվա պես:

Ճանձերն են հոգին հանում — նա պոկում եր ծառից
մի ճյուղ ու սկսում թափահարել այն հոգիարի նման:

Արեն ե ալրում — նա թաղում եր իր կնճիթը գետի
մեջ, — և ահա նրա զլիին մի սառը, թաց շրջպոց: Զանձ-
րալի լե անդործ թափառել Աֆրիկալում, — նա կնճիթով
յերգեր ե ասում ու նրա կնճիթն ավելի ձախնեղ ե, քան
հարյուրավոր պղնձլա փողեր:

Նա դիտմամբ ծոեց իր ճանապարհը, վոր գտնի
Գետաձիուն, մի լավ քոթակի նրան ու ստուգի, ճիշտ ա-

սաց նրան, արդիոք, Յերկերանդ Պիտոնը նրա նոր քթի
մասին: Քոթակելով Գետաձիուն, նա գնաց նախկին ճա-
նապարհով ու հավաքում եր գետնից այն սեխի կլեպները,
վորոնք նա ցըիվ եր տվել կիմպոպոյի ճանապարհին, —
վորովհետև Մաքրասեր Հաստակաշի յեր:

Արդեն մթնել եր, յերբ մի գեղեցիկ յերեկո նա յե-
կավ տուն, իր սիրելի ազգականների մոտ: Նա կնճիթը
վոլորեց ողակի նման ու ասաց՝

— Բարե ձեզ, ինչպես եք:

Նրանք սարսափելի ուրախացան նրան տեսնելով և
իսկուն և յեթ ասացին միաբերան՝

— Ապա արի, արի՛ մի ալսուեղ, մենք մի լավ դընք-
սենք քեզ քո անտանելի հետաքրքրության համար:

— Հայ, հայ, — ասաց Փղիկը: — Դուք իսկի հասկանում
եք վորն ե իսկական դնքսոցը: Այ, յես — ինչ եմ ասել:
Ուզում եք ցուց տամ:

Յեվ նա բացեց իր կնճիթը և իսկուն և յեթ նրա
սիրելի յեղբայրները թուան մի կողմ, գլխկոնձի տա-
լով:


— Յերդվում ենք բանաններով, — բղավեցին նրանք,
— ես վորտեղ ես դու եղան վարպետացել, և ինչ ե
պատահել քո քիթի հետ:

— Եղ քիթն ինձ մոտ նոր ե, և տվել ե ինձ այն
կոկորդիլոս՝ կեղտոտ, պղտորկանաչ կիմպոպո գետի
մոտ, — ասաց Փղիկը: — Յես նրա հետ զրուց սկսեցի այն
մասին, թե ինչ ե ուտում նա ճաշին, և նա ինձ նվիրեց
ալդ քիթը:

— Անճոռնի քիթ ե, — ասաց մազոտ, բրդոտ հորեղ-
բալլ Պավիանը:

— Գուցե, — ասաց Փղիկը, — բայց ոգտակար ե:
Յեվ նա բոնեց մազոտ հորեղբալլ Պավիանին մազոտ
վոտքից ու, տարուքելով, գցեց նրան կրեաների բունը:

Յեվ այնպես վոգերպվեց ալդ անտանելի Փղիկը,
վոր իր բոլոր սիրելի ազգականներին լավ քոթակ տվեց:



Յեկ նաբոնեց մազոս հորիեղբայր Պալիանին:

Նըանք աչքները չուցին նրա վրա զարմանքից։ Նա պոկեց իր յերկարահասակ մորքուր Զալլամի պոչից գրեթե բոլոր փետուրները։ Նա բռնեց յերկարոտն քեռի Ընձուղտին յետեվի վոտքից ու քաշ տվեց նրան փշենու թփերի միջով։ Հարալ հրոցով նա սկսեց փուչիկներ բաց թողնել ուղիղ իր հաստ հորաքուր Գետաձիու ականջին, յերբ նա ննջում եր ջրի մեջ ճաշից հետո, բայց վոչ վոքի չեր թույլ տալիս վիրավորել կոլոկոլո թռչնիկին։

Բանն ալնտեղ հասավ, վոր նրա բոլոր ազգականները, — վորն ավելի շուտ, վորն ավելի ուշ, — ուղևորվեցին դեպի կեղտոտ, պղտոր-կանաչ կիմպուլո գետը, վորը շրջապատված է մարդկանց մեջ ջերմախտ առաջացնող ծառերով, վոր կոկորդիլոսն իրենց ել նվիրի ալդպիսի քիթ։

Վերադառնալով ազգականներն ալևս չելին կռվում և ալդ ժամանակից, իմ տղաս, բոլոր Փղերը, վորոնց դու յերեկիցե կտեսնես, նաև նրանք, վորոնց դու յերեք չես տեսնի, բոլորն ունեն հենց նույնպիսի կնճիթ, ինչպիսին ուներ ալդ հետաքրքիր Փղիկը։



Վեց հատ ծառա լեռ միշտ ունեմ,
Վեցն ել խիզախ ու ճարպիկ,
Յեվ, ինչ վոր լեռ շուրջս տեսնեմ,
Յես կիմանամ նրանցից:

Իմ նշանով նրանք իսկուն
Հայոնվում են իմ առջև,
Անուններն են, Խնչպես, Խնչու,
Ով և ինչ, Յերբ և Վորտեղ:

Լայն ծովերով, անտառներով
Վազեցնում եմ քաջերիս,
Ապա զբաղվում աշխատանքով,
Նրանց հանգիստ եմ տալիս:

Վեր կենալով առավոտան,
Յես գործի լեմ միշտ անցնում,
Ազատություն տալիս նրանց,
Նրանք ուտում են ու խմում:

Բալց կա ինձ մոտ լերիտասարդ
Բարեկամո, սիրելիս,
Ծառա ունի հարլուր հազար,
Նրանց հանգիստ չի տալիս:

Քշում ե, վոնց շներ անխոնջ,
Բուք-անձրեխն, թե մթնում
Հինգ հազար Ուր, լոթ հազար Վոնց,
Հարլուր հազար հատ ինչու:

Պատ. խմբագիր՝ ԵԴ. ԶՈՓՈՒՅՑԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
Մ.բագրիչ՝ Ա. ԱՐՁԱՔԱՆՅԱՆ



Տրված և արտադրության 16 սեպտեմբերի, 1936 թ.
Սառըագրված և տպելու 13 նոյեմբերի, 1936 թ.
Գլավիսի լիազոր Կ-4463
Հրատ. 3875
Տիրած 3000
Պատվեր 1125

Պետրաշի տպարան, Յերևան, 11 Կմունյանցի, 4

38

մերկ

ԳՐԱՑ 60 Կ. 9/12

Р. КИПЛИНГ
СЛОНЕНОК
ГИЗ ССР АРМЕНИИ

ՀՀ Ազգային գրադարան



NL0376249

721